ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Տաթևիկ Ստեփանյան
   Սոֆի Բոստանչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   2025 թվականի մարտի 31-ապրիլի 1, Ավստրիայի Հանրապետություն, Վիեննա

4. **Հրավիրող կողմը.**
   Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն (ԵԱՀԿ)

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Մարդկանց թրաֆիքինգի դեմ դաշինքի բարձր մակարդակի՝ «Պաշտպանելով մանկությունը, կերտելով ապագան. Երեխայի թրաֆիքինգի դադարեցման ուղերձ» խորագրով 25-րդ համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովը կենտրոնացած էր երեք հիմնական թեմաների շուրջ, որոնք խորությամբ ուսումնասիրվեցին փորձագիտական պանելային քննարկումների միջոցով, երեխաների թրաֆիքինգի զարգացող դինամիկայի միտումները և օրինաչափությունները, խոցելիությունից մինչև նորարարություն, երեխաների թրաֆիքինգի ռիսկերի հաղթահարում, և եզրափակիչ թեման՝ ուղղված այն գաղափարի ամրապնդմանը, որ երեխաների պաշտպանությունն ընդհանուր պատասխանատվություն է:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

ԵԱՀԿ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի դաշինքի 25-րդ համաժողովն ուղղված էր երեխաների իրավունքների պաշտպանության ու երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող աշխատանքների, առկա մարտահրավերների ու դրանց լուծման տարբերակների քննարկմանը: Նպատակը՝ երեխաների թրաֆիքինգի վերացման ուղղությամբ նորարարական մոտեցումների և համատեղ գործողությունների անհրաժեշտությունը շեշտադրելն էր՝ ապահովելով ոլորտի համապարփակ վերլուծություն երեխաների թրաֆիքինգի արդի միտումների, երեխաների խոցելիության ու ռիսկային գործոնների, առկա մեխանիզմներում արձանագրված բացերի, ինչպես նաև արդյունավետ փորձառությունների ու հանցավոր գործունեության դեմ պայքարի և երեխաների պաշտպանության նորագույն գործիքների ներկայացման շրջանակներում:

ԵԱՀԿ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի դաշինքի 25-րդ համաժողովին մասնակցության շրաջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Շվեդիայի, Գերմանիայի և ԵԱՀԿ-ի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին երեխաների պաշտպանության և թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ երկկողմ համագործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր:

ԵԱՀԿ-ի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով հատուկ ներկայացուցիչ Քարի Ջոնսթոնի հետ ունեցած հանդիպման ընթացքում Տաթևիկ Ստեփանյանի կողմից ներկայացվեցին ոլորտային բարեփոխումները. ընդգծվեց միջազգային գործընկերների հետ շարունակական համագործակցության կարևորությունը: Քարի Ջոնսթոնը ևս ողջունեց թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակում համատեղ նախաձեռնություններ իրականացնելու և փորձի փոխանակմանն ուղղված աշխատանքները. վերջինս նաև պատրաստակամություն հայտնեց առաջիկայում գործուն քայլեր իրականացնել այդ ուղղությամբ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Շվեդիայի և Գերմանիայի պատվիրակությունների հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև վերջիններիս կողմից՝ ՀՀ ներկայացուցչության միջոցով ստանալ տվյալ երկրների թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագրերը, դրանց մոնիթորինգի գործիքակազմերը և այլն:

Համաժողովի ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
ԵԱՀԿ-ի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով հատուկ ներկայացուցիչ Քարի Ջոնսթոնի հետ ունեցած հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Ներկայացուցչի գրասենյակից թրաֆիքինգի դեմ պայքարի նոր գործողությունների ազգային ծրագրի մշակման հարցում կստանա փորձագիտական աջակցություն:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Recoverable Signature

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293

**Սոֆի Բոստանչյանի ստորագրությունը բացակայում է՝ պայմանավորված վերջինիս արձակուրդում լինելու հանգամանքով:*